ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՍՄԻԿ ՋԻՎԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ» (2000-ԱԿԱՆ ԹԹ.) ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակային պաշտպանության ներկայացված թեկնածուական այս ատենախոսությունը նվիրված է գրականության տեսության կարևորագույն և արդիական հիմնախնդիրներից մեկին՝ միջտեքստայնության դրսևորումների, գործառույթների և գեղագիտական առանձնահատկությունների քննությանը ժամանակակից՝ 2000-ական թվականների հայ արձակում: Միջտեքստայնության քննաբանությունը, հարկավ, նորություն չէ գրականագիտության մեջ. մեր իրականության մեջ խնդրի վերհանման և լրջմիտ հետազոտության առաջամարտիկը պրոֆ. Ժենյա Քալանթարյանն է, որը տեսական այդ խնդրին նվիրված իր հոդվածներով շրջանառության մեջ դրեց այդ եզրույթը և մեզանում ձևավորեց դրա ընկալման տեսական հիմքերը:

Թեմայի ընտրությունը պատահական չէ. այն, անուշտ, պայմանավորված է արդի գրական գործընթացներում միջտեքստայնության բացառիկ ակտիվացմամբ: Ժամանակակից գեղարվեստական տեքստն առավելապես կառուցվում է բազմաշերտ հղումների, մշակութային հիշողության, պատմական ու գաղափարական կոդերի համադրության միջոցով՝ ընթերցողից ակնկալելով որոշակի նախագիտելիք և մշակութաբանական պատշաճ լիարժեք և համակողմանի ընթերցանության համար: Եվ ատենախոսության հեղինակը միանգամայն իրավացիորեն շեշտում է, որ միջտեքստային իրողությունների քննությունը պարզապես անհրաժեշտ է, որպեսզի հասկանալի դառնան պատմական հիշողության, ինքնության և գեղարվեստական մտածողության վերակառուցման գործընթացները: Այս առումով հետազոտությունը ոչ միայն համապատասխանում է ժամանակակից հայ գրականագիտության շահեկան որոնումներին, այլև կարևոր ներդրում է ընդհանրապես գրականության տեսության ասպարեզում:

Ատենախոսության ներածության մեջ հստակ ներկայացված են թեմայի արդիականությունը, հարցի պատմությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, գի-

տական նորույթը, մեթոդաբանական հիմքերը և կիրառական նշանակությունը: Հեղինակը հիմնավորված ցույց է տալիս միջտեքստայնության բազմավեկտոր շառավիղները, որոնք մի կողմից հանդես են գալիս որպես գեղարվեստական հնարք, մյուս կողմից՝ իբրև պատմական հիշողության, ազգային ինքնության և մշակութային փոխձառության վերակառուցման մեխանիզմ: Եվ գնահատելի է, որ այս դրույթը հետազոտության ամբողջ ընթացքում հետևողականորեն ապացուցվում է բնագրային բազմակողմանի վերլուծություններով:

Ակնառու է, որ հետազոտությունը հենվում է նպատակասլաց մեթոդաբանական հենքի վրա՝ պոետիկա, հերմենևտիկա (Պոլ Ռիկյոր), ֆենոմենոլոգիա և սոցիոլոգիա: Արդյունավետորեն կիրառված են նաև Մ. Հիրշի հետհիշողության (postmemory) տեսությունը և նարատիվ վերլուծության մեթոդները:

Ամենագնահատելին թերևս ատենախոսության գիտական նորույթի բազմաշերտությունն է: Նախ՝ առաջին անգամ արդի հայ արձակում միջտեքստայնությունը դիտարկվում է որպես պատմական հիշողության և ինքնության կառուցման համակարգային քննաբանություն: Կիրառվել է նաև Լինդա Հաթչոնի պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը՝ բացահայտելով հայ և համաշխարհային հետմոդեռնիստական գրականության փոխկապակցվածությունը: Բացի այդ՝ առանձնացվել են միջտեքստայնության նոր շերտեր՝ պատմագրական, ինքնակենսագրական, բանահյուսական ու մետալեզվական, և միջտեքստայնությունը քննվել է որպես պատմության վերաիմաստավորման և ցավալի անցյալի (ցեղասպանություն, պատերազմ) փոխանցման մեխանիզմ:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Միջտեքստայնության պատմական և տեսական հիմքերը, հետմոդեռնիստական առանձնահատկությունները», ունի տեսական կարևոր նշանակություն: Ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է միջտեքստայնության տեսության ձևավորման պատմությունը՝ անդրադառնալով Յուլյա Կրիստևայի, Միխայիլ Բախտինի, Ռոլան Բարտի, Ժերար Ժենետի, Յուրի Լոտմանի և այլ հեղինակավոր տեսաբանների հայեցակարգերին: Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տեսական նյութը ներկայացվում է քննադատական համադրությունների միջոցով: Հետազոտողը կարողացել է տեսական տարբեր մոտեցումները ներգրավել

արդի հայ արձակի քննության համատեքստում՝ ցույց տալով դրանց կիրառական արդյունավետությունը:

Գնահատելի է նաև այն, որ ատենախոսության մեջ միջտեքստայնությունը դիտարկվում է ոչ միայն գրականագիտական, այլև փիլիսոփայական, սոցիոլոգիական և մշակութաբանական համատեքստերում: Ֆերդինանդ դը Սոսյուրի նշանագիտության, Բախտինի երկխոսության տեսության, Լինդա Հաթչոնի պատմագրական մետագեղարվեստականության հայեցակարգի և հետմոդեռնիզմի այլ տեսական մոտեցումների համադրումը հնարավորություն է ընձեռել ձևավորելու հետազոտության մեթոդաբանական մի ամբողջական համակարգ:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Միջտեքստայնությունը՝ որպես պատմագրական մետագեղարվեստականության մեխանիզմ», առանձնանում է հատկապես իր գիտական նորույթով: Ատենախոսը փաստարկում է, որ ժամանակակից հայ արձակում պատմությունը ներկայացվում է ոչ թե որպես անփոփոխ փաստերի ամբողջություն, այլ որպես լեզվական ու գաղափարական կառուցում: Այս տեսանկյունից արժեքավոր են Վահագն Գրիգորյանի, Նորայր Սարգսյանի և այլ հեղինակների ստեղծագործությունների վերլուծությունները, որոնց միջոցով բացահայտվում են պատմության վերաշարադրման, հիշողության պահպանման և քաղաքական դիսկուրսների քննադատության մեխանիզմները:

Կարծում եմ, որ ատենախոսության այս հատվածում հատկապես հաջողված է Նորայր Սարգսյանի «Հանրապետություններից երրորդը» վեպի քննությունը. ատենախոսը համոզիչ կերպով բացահայտում է սիմուլյակրի, պարոդիայի և պատմական հեգնանքի կիրառությունները խնդրո առարկա երկում: Նա կարողանում է հիմնավորել, որ միջտեքստայնությունն այստեղ վերածվում է պատմական գիտակցության քննադատության միջոցի:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Աստվածաշնչյան, մշակութային և այլ հղումների հետմոդեռնիստական ընթերցումներ», աչքի է ընկնում լայն նյութի ընդգրկմամբ և հետաքրքիր մեկնաբանություններով: Արփի Ոսկանյանի, Գուրգեն Խանջյանի, Արարատ Գյուլբանգյանի ստեղծագործությունների քննությունը ցույց է տալիս, թե ինչպես են աստվածաշնչյան, մշակութային, գիտական և զանգվածային մշակույթի հղումները վերաիմաստավորվում հետմոդեռնիստական աշխարհընկալման շրջանակներում: Ատենախո-

սը կարողացել է բացահայտել ժամանակակից մարդու հոգևոր ճգնաժամը, արժեքային համակարգերի փլուզումը և իրականության ֆրագմենտացված ընկալումը՝ միջտեքստային բազմաշերտ կապերի միջոցով:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է նաև լայն և բազմաբնույթ աղբյուրագիտական հենքը: Հեղինակը ներգրավել է թե՛ արևմտյան, թե՛ ռուսական և թե՛ հայ գրականագիտական աշխատություններ, կարողացել է դրանք ստեղծագործաբար կիրառել հայ գրական նյութի վերլուծության ընթացքում: Ակնհայտ է նաև հեղինակի մասնագիտական բարձր պատրաստվածությունը, տեսական գրականության քաջիմացությունն ու գիտական լեզվի տիրապետումը:

Աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն: Այն կարող է օգտակար լինել ժամանակակից հայ գրականության, գրականության տեսության, հետմոդեռնիզմի և միջտեքստայնության դասընթացների համար, ինչպես նաև ծառայել հետագա գիտական ուսումնասիրությունների հիմք:

Բայց և այնպես՝ չնայած աշխատանքի գիտական պատշաճ մակարդակին՝ նկատելի են որոշ թերացումներ, որոնք, սակայն, չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը:

1. Որոշ հատվածներում տեսական անդրադարձները չափազանց ծավալուն են ու երբեմն գերակշռում են բնագրային վերլուծությանը: Հատկապես առաջին գլխում կարելի էր տեսական հատվածների մի մասն ավելի խտացնել:
2. Ատենախոսության մեջ երբեմն միջտեքստայնության տարբեր ենթատեսակների սահմանները լիովին հստակ չեն տարբերակվում, մասնավորապես՝ հիպերտեքստայնության, մետատեքստայնության և պարոդիկ վերաշարադրումների սահմանները:
3. Երրորդ գլխում քննվող «կյանքի տարբեր ոլորտների հղումները» (ֆիզիկա, շախմատ) չափազանց հետաքրքիր են, սակայն երբեմն տեսական ընդհանրացումները զիջում են բնագրային նկարագրությանը:
4. Ցանկալի կլիներ ավելի լայնորեն անդրադառնալ նաև թվային մշակույթի և սոցիալական մեդիայի ազդեցությանը արդի հայ արձակի միջտեքստային կառուցվածքների ձևավորման վրա, քանի որ այդ երևույթը 2000-ականների գրական գործընթացի կարևոր բաղադրիչներից է:

Այդուհանդերձ, նշված դիտարկումները հիմնականում ունեն մասնավոր բնույթ և չեն ազդում աշխատանքի ընդհանուր բարձր գնահատականի վրա: Եվ իմ եզրակացությունը հետևյալն է՝

Հասմիկ Հակոբյանի ատենախոսությունը հասուն, ինքնուրույն և համակողմանի հետազոտություն է, որն ունի թե՛ տեսական, թե՛ կիրառական մեծ նշանակություն: Այն լրացնում է հայ գրականագիտության մեջ առկա բացը և նոր լույս սփռում արդի հայ արձակի զարգացման միտումների վրա:

Հեղինակի կողմից հրատարակված գիտական 6 հոդվածները, մենագրությունը և ատենախոսության սեղմագիրը լիովին արտացոլում են ատենախոսության հիմնադրույթները:

Այսպիսով՝ Հասմիկ Ջիվանի Հակոբյանի «Միջտեքստայնությունը արդի հայ արձակում (2000-ական թթ.)» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ժ. 01. 04 – «Գրականության տեսություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Ռուզան Ռաֆայելի Ղազարյան
բանաս. գիտ. թեկնածու, դոցենտ

18. 06. 2026 թ.

Բանաս. գիտ. թեկնածու, դոցենտ Ռուզան Ռաֆայելի Ղազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ. գ. թ., դոցենտ
Մ. Վ. Հովհաննիսյան